

ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԱՍՈՒՄ Է ՈՉ

Ինչ անել Երբ..... Մաս4

«Կանչիր ինձ և ես քեզ պիտի պատասխանեմ...»

Երեմիա 33:3

3 ձևով Աստված պատասխանում է աղոթքին

Երբեմն Աստված ասում է «Այո»

Երբեմն Աստված ասում է «Դեռ Ոչ»

Երբեմն Աստված ասում է «Ոչ»

Ինչու Աստված երբեմն ոչ է ասում

1. Որովհետև Աստված ավելի մեծ հեռանկարներ ունի

«Նրա երեսից աներևույթ մի արարած չկա, այլ ամեն բան մերկ է ու բաց նրա աչքերի առաջ.» Եբրայեցիս 4:13

«(Աստված) ... պահում է իր բարեպաշտների ճանապարհը.» Առակաց 2:8

2. Որովհետև Աստված ավելի լավ ծրագիր ունի

«Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն...այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներիցը...»

Եսայիա 55:8-9

«Սրանք բոլորը հավատով վկայություն ստացան, բայց խոստումը չընդունեցին: Որովհետև Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց...»

Եբրայեցիս 11:39-40

3. Որովհետև Աստված ավելի մեծ նպատակներ ունի

«Տերն ստեղծել է ամենը իր նշանակության համար.»

Առակաց 16:4

«Որպեսզի ձեր հավատի փորձառությունն ավելի պատվական լինի, քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում...»

Ա Պետրոս 1:7

«Դրա համար չենք վհատվում... որովհետև մեր այժմյան թեթև նեղությունը անգերազանցելի հավիտենական փառքի մեծությունն է գործում մեզ համար:» Բ Կորնթացիս 4:16-17

Երկու հիմնական ճշմարտություններ

1. Որոշ բաներ ես երբեք չեմ հասկանա

2. Որոշ բաներ երբեք չեն փոխվի, անկախ նրանից, թե ես ինչքան կաղոթեմ դրանց համար

Ինչ անել երբ Աստված Ոչ է ասում

1. Հավատա, որ այն ամենը ինչ Աստված անում է, հիմնված է սիրո վրա

«Տիրոջ բոլոր ճանապարհները ողորմություն են...» Սաղմոս 25:10

«Աստծուն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում նրանց բարիքի համար.» Հռովմայեցիս 8:28

2. Ակնկալիր Աստծուց ստանալ Ոչը ընդունելու շնորհքը

«Դրա համար երեք անգամ Տիրոջն աղաչեցի, որ նրան ինձանից հեռացնի: Նա էլ ինձ ասաց. "Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ գործությունը տկարության մեջ է իրագործվում"»

Բ Կորնթացիս 12:7-9

«Որովհետև Աստված է որ ձեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես:» Փիլիպպեցիս 2:13